



ք. Երևան, 12.08.16 թ.  
Ելք № 033

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

պրն. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Հովսեփյան

Հայտնում ենք Ձեզ, որ «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը շարունակաբար մշտադիտարկման է ենթարկում ՀՀ հարկային ծառայության taxservice.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվության բովանդակությունը: Կայքում առկա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների (վարչություն, բաժին) և տարածքային մարմինների ղեկավարների վերաբերյալ տեղեկատվությունն ուսումնասիրելիս պարզվեց, որ կայքում ներառված պաշտոնատար անձանց մի մասի էլեկտրոնային փոստի հասցեն բացակայում է: Եթե այնուամենայնիվ պաշտոնատար անձանց էլեկտրոնային հասցեն հրապարակային դարձնելու պահանջն առկա է օրենսդրությամբ, կարծում ենք, որ այդ դեպքում պետք է կայքում ներկայացվի բոլոր պաշտոնատար անձանց էլեկտրոնային փոստի հասցեները:

Մյուս կողմից, անհասկանալի է պաշտոնական հաղորդագրությունների համար հարկային ծառայության պաշտոնական կայքում պաշտոնատար անձանց անձնական էլեկտրոնային փոստի հասցեների տեղադրումը: Գրեթե համատարած տեղադրված է mail.ru դոմեյնով ( որոշ դեպքերում՝ gmail.ru կամ list.ru ) էլեկտրոնային հասցեներ:

Ելնելով վերոշարադրյալից, խնդրում ենք վերանայել հարկային և մաքսային ծառայությունների պաշտոնական կայքերում առկա պաշտոնական գրագրության համար նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեները և տեղադրել բացառապես հարկային ծառայության taxservice.am և մաքսային ծառայության customs.am դոմեյնով էլեկտրոնային հասցեներ և հարկ վճարողների հետ տեղեկատվությունը փոխանակել այդ պաշտոնական փոստային հասցեներից:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թաղևոսյան